

Po

# «ՆԵՍՏԼԵ»-Ի ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԳԻՎՐՔԸ

Դեկտեմբեր, 2013



Տրամադրման գործառույթը  
Կորպորատիվ գնումներ

Թիրախային լսարանը  
«ՆԵՍԼԵ»-ի մատակարարողները և համարտադրողները  
«ՆԵՍԼԵ»-ի գնումներ

Հաստատող մարմինը  
Գործադիր խորհուրդ, դեկտեմբեր, 2013 թ.

Պահոց  
«ՆԵՍԼԵ»-ի բոլոր կարգի սկզբունքները և քաղաքականությունը, չափորոշիչները և  
նուղեցույցները կարող եք որոնել կենտրոնի օնլայն պահոցում՝ հետևյալ հասցեով՝  
<http://intranet.nestle.com/nestledocs>  
«ՆԵՍԼԵ»-ի օրենսգիրքը կարող եք որոնել հետևյալ հասցեով՝  
[www.nestle.com/suppliers](http://www.nestle.com/suppliers)

Հեղինակային իրավունքներն ու գաղտնիությունը  
Բոլոր իրավունքները պատկանում են ՍՊԸ ՆԵՍԵԿ-ին, ՎԵՎԵ, Շվեյցարիա  
© 2013, ՍՊԸ ՆԵՍԵԿ

Դիզայն  
ՍՊԸ ՆԵՍԵԿ, կորպորատիվ ինքնություն և դիզայն  
ՎԵՎԵ, Շվեյցարիա

# ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ «ՆԵՍՏԼԵ»-Ի ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԳԻՔԻ ՀԱՄԱՐ

## 1. Նպատակը

«ՆԵՍՏԼԵ»-ի մատակարարողի օրենսգիրքը պարունակում է նվազագույն չիսախտված չափանիշներ, որոնց պահպանումն ու հարգանքն ենք խնդրում մեր մատակարարողներից (այսուհետ՝ «մատակարարողից») և դրանց ենթամատակարարողներից կոմպանիա «ՆԵՍՏԼԵ»-ի հետ միասին իրագործման ենթակա կոմերցիոն գործունեության սահմաններում: Այս փաստաթուղթը հնարավորություն է տալիս ապահովել մեր կողմից աջակցվող միջազգային ստանդարտների շարունակական պաշտպանությունը, ինչպիսիք են՝ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպման (S2Q4-ի) ուղեցուցային սկզբունքները բազմազգ ձեռնարկությունների համար, ձեռնարկատիրական գործունեության ուղեցուցային սկզբունքները ՄԱԿ -ի կողմից սահմանված մարդու իրավունքների ասպեկտում, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ՄԱԿ) հիմնական կոնվենցիաները և ՄԱԿ - ի Գլոբալ պայմանագրի 10 սկզբունքները, ոչ միայն մեր կողմից իրականացված գործունեության սահմաններում, այլև շղթայի բոլոր փուլերում սկսած առաքման ուղիների օղակներից, առանձին ֆերմերային տնտեսություններով և տնկարկներով (պլանտացիաներով) ավարտած: Սույն Օրենսգիրքն ընդլայնում է կոմպանիա «ՆԵՍՏԼԵ»-ի կորպորատիվ բիզնեսի սկզբունքներն ու մատակարարողի գնահատման և պատասխանատվությամբ ընտրության ծրագրի հիմք է հանդիսանում, որի մասին խոսվում է «Պաշտպանություն» մասում: .

## 2. Ծավալը

Օրենսգրքում տրված ստանդարտները արտահայտում են մեր ակնկալիքները մատակարարողներից, որոնց հետ աշխատում է կոմպանիա «ՆԵՍՏԼԵ»-ն, այդ թվում՝ դրանց գլխամասային, դուստր կամ մասնաճյուղացված կոմպանիաներից, ինչպես նաև այլ կողմերից, որոնց հետ նրանք ունեն գործարար հարաբերություններ, այդ թվում՝ բոլոր աշխատակիցներից (ներառյալ մշտական, ժամանակավոր և պայմանագրային գործակալությունների հետ դրված պայմանագրերի համաձայն աշխատող աշխատակիցներից և ներգաղթած աշխատակիցներից) վերին մակարդակի մատակարարողներից և երրորդ անձանցից: Մատակարարողը պատասխանատվություն է կրում սույն օրենսգիրքը տարածելու, ծանոթացնելու և դրա դրույթների պահպանման մանրակրկիտ ստուգելու համար՝ աշխատակիցների, գործակալների և ենթամատակարարողների, այդ թվում՝ ֆերմերների կողմից, եթե նրանց դա պատկանում է:

## 3. Պաշտպանություն

Ընկերությունը հուսով է, որ մատակարարը կպահպանի բոլոր գործող օրենքներն ու կանոնակարգերը, մասնավորապես՝ սույն փաստաթուղթով տրված հիմնական սկզբունքները,

ինչպես նաև ձգտում կունենա՝ պահպանելու բոլոր միջազգային արտադրական չափանիշները և աշխատանքի առավել առաջադեմ մեթոդները: Բացի այդ, կոմպանիա «ՆԵՍՏԼԵ»-ն իրեն է վերապահում մատակարարողների գնահատման և պատասխանատվությամբ ընտրելու ծրագրի ներքին և արտաքին գնահատման մեխանիզմների միջոցով Օրենսգրքի դրույթների պահպանման ստուգման և ձեռք բերած արդյունքների աուդիտի պահանջներում կամ մատակարարների գնահատման և պատասխանատվությամբ ընտրելու ծրագրում ընդգրկվելու պահանջի իրավունքը:

## 4. Անընդհատ բարելավում

«ՆԵՍՏԼԵ»-ն ընդունում է, որ սույն օրենսգրքում տրված չափորոշիչներին հասնելը աստիճանական, փուլ առ փուլ գործընթաց է և մատակարարողներին կոչ է անում շարունակականորեն, անընդհատ բարելավել սեփական աշխատանքի որակը: Բարելավման կամ մանր հոդագործներից և ֆերմերներից ռեսուրսներ ստանալու անհրաժեշտության դեպքում «ՆԵՍՏԼԵ» ընկերությունն կօգնի նրանց աշխատանքում կիրառված մեթոդների՝ առանց ընդհատման բարելավման, անհրաժեշտ հանգուցային փուլերի և համակարգի սահմանման մեջ: Այս պահանջի խախտումը անմիջականորեն կարտահայտվի կոմպանիա «ՆԵՍՏԼԵ»-ի հետ գործարարական գործունեություն ծավալելու մատակարարողի իրավունքի վրա:

## 5. Կիրառումը

Սույն Օրենսգրքի գործողության ընդունումը անհրաժեշտ պայմանն է հանդիսանում՝ «ՆԵՍՏԼԵ»-ի հետ ցանկացած մատակարարման պայմանագրի կնքման համար: Մատակարարման պատվեր ընդունելիս, որտեղ ցուցանված է սույն Օրենսգիրքը, մատակարարողը սրանով համաձայնում է, որ իր գործունեությունը դառնում է ենթակա սույն Օրենսգրքի դրույթների գործողությանը: Սույն Օրենսգիրքը կամ նրա պահանջների պաշտպանման ապացույցները մատակարարողի հետ արտաքին բենեֆիցիարների իրավունքների ծագման հիմք չեն ներկայացնում: Սույն Օրենսգրքում տրված չափանիշները գործում են լրացուցիչ կերպով, բայց ոչ՝ Մատակարարողի և «ՆԵՍՏԼԵ»-ի միջև ձևակերպված ցանկացած իրավական համաձայնագրերի կամ պայմանագրերի կամ կոնտրակտի փոխարեն:



# «ՆԵՍՏԼԵ»-Ի ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ 4 ԴՐՈՒՅԹ

## 1. Մարդու իրավունքները

ՆԵՍՏԼԵ-ն աջակցում է ՄԱԿ-ի բիզնեսի և մարդու իրավունքների շրջանակին և ղեկավարման սկզբունքներին ինչպես նաև կարծում է, որ մատակարարողը պարտավոր է հարգել ամեն կարգի մարդու իրավունքները, այդ թվում՝ աշխատանքային իրավունքները՝ իր ողջ գործունեության ընթացքում։ Մարդու իրավունքների պաշտպանման նվազագույն թվարկումը բերված է ստորև՝

Միության և կոլեկտիվ բանակցությունների ազատություն

Մատակարարողը պետք է իրենց աշխատողներին շնորհի միությունների և կոլեկտիվ բանակցությունների ազատություն՝ բոլոր գործող օրենքների կամ կանոնակարգերի համապատասխան։

Հարկադիր աշխատանքի արգելում։

Մատակարարողը պարտավոր է ոչ մի դեպքում չկիրառել կամ ցանկացած այլ ճանապարհով չօգտվել և շահ չստանալ հարկադիր աշխատանքից՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության հարկադիր աշխատանքի մասին N29 կոնվենցիայի համաձայն, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության հարկադիր աշխատանքի մասին N105 կոնվենցիայի համաձայն։

Հարկադիր աշխատանք նշանակում է՝ ցանկացած որևէ ձևի ուժով աշխատուժի հնազանդություն, ինչպիսիք են՝ մարմնական պատիժը, ազատությունից զրկելը, բռնության պատճառից, որպես կարգապահության կամ վերահսկողության մեթոդը՝ օրինակ՝ ինչպիսիք են անձի նույնականացման քարտեր, անձնագրեր, աշխատանքի մուտքի թույլտվություն, դրամական միջոցների արգելափակում-պահպանում՝ աշխատանքի ընդունման պայմանի փոխարեն։

Մատակարարողը պարտավոր է տեղեկացնել «ՆԵՍՏԼԵ»-ին այն բանի մասին, թե նա օգտագործում է բանվոր-միգրանտների և բանտարկյալների (օրինական ճանապարհով) աշխատանքը, որպեսզի կոմպանիան («ՆԵՍՏԼԵ»-ն) հնարավորություն ունենա ուսումնասիրելու համապատասխան փաստաթղթերը։

Խտրականության բացակայություն՝ աշխատանքի ընդունումն անհատական ժամանակ

Մատակարարողն աշխատանքի պետք է ընդունի միայն այն մարդկանց, ովքեր ունեն իրենց օբյեկտում աշխատելու օրինական իրավունք և պատասխանատու են ստուգելու աշխատակիցների աշխատանքի ընդունման իրավասությունը համապատասխան փաստաթղթերի միջոցով։ Բոլոր աշխատանքները պետք է լինեն կամավոր, և վարձված մարդիկ պետք է իրավունք ունենան դադարեցնելու աշխատանքը, կամ թողնել ծառայությունը՝ ներկայացված դիմումի հիման վրա՝ ողջամիտ ժամկետում։ Հնարավորության սահմաններում բոլոր աշխատանքները պետք է կատարված լինեն պաշտոնապես ընդունված աշխատանքային հարաբերություններից ելնելով, ընդունված ազգային օրենսդրությամբ և համընդհանուր գործնական գործունեության համապատասխան։

Պարտականությունները՝ ստանձնած աշխատակիցների նկատմամբ աշխատանքային, թե սոցիալական ապահովության սահմաններում ծագած մշտական աշխատանքային հարաբերություններից,

չեն կարող լուծարվել միայն աշխատանքային պայմանագրի, ենթապայմանագրի կամ աշխատանքը տանը կատարելու մասին համաձայնության կիրառմամբ, ինչպես նաև ուսումնական սխեմաների միջոցով, որտեղ գոյություն չունի հմտությունները բարելավելու իրական մտադրություն կամ կանոնավոր աշխատանքի ապահովում։

Այսպես նաև չպետք է կատարվի ցանկացած այսպիսի պատասխանատվությունից խուսափում՝ ժամկետային աշխատանքի պայմանագրերի չափից ավելի օգտագործման միջոցով։

Աշխատանքային գործակալությունների միջոցով աշխատողների վարձակալման դեպքում մատակարարողը պարտավոր է գործել Աշխատանքի միջազգային կազմակերպության մասնավոր գործատու գործակալությունների մասին N181 կոնվենցիայի համաձայն։

Աշխատանք որոնողի նվազագույն տարիքը

Մատակարարողի կողմից մանկական աշխատուժի օգտագործումը խստիվ արգելվում է Միջազգային աշխատանքային կազմակերպության նվազագույն տարիքի մասին N138 կոնվենցիայի համաձայն, ինչպես նաև երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին N182 կոնվենցիայի համաձայն։ Աշխատանքի միջազգային կազմակերպության նվազագույն տարիքի մասին N138 կոնվենցիան նշում է, որ 15 տարեկանից ցածր (որոշ զարգացող երկրներում՝ 14 տարեկանից ցածր) ոչ մի երեխա իրավունք չունի աշխատելու, բացառությամբ այն դեպքերի, երբ թույլատրված է Աշխատանքի միջազգային կազմակերպության կամ տեղական օրենսդրության համաձայն։

Եթե մատակարարողը օգտագործում է երիտասարդ աշխատողների աշխատուժը, նա պետք է ցույց տա, որ երիտասարդ աշխատուժի վարձակալումը նրան չեն դնում անհարկի ֆիզիկական ռիսկի տակ, ինչը կարող է զսպա պատճառել նրանց ֆիզիկական, մտավոր կամ հուզական զարգացմանը։

Անաչառ և հավասար վերաբերմունք

- Մատակարարողը պարտավոր է աշխատողներին վերաբերվել հարգանքով՝ նրանց արժանապատվության և ամբողջականության պահպանմամբ։
- Աշխատանքի միջազգային կազմակերպության խտրականության մասին N111 կոնվենցիայի համաձայն՝ մատակարարողը չպետք է իրականացնի խտրականություն ելնելով՝ ռասայից, մաշկի գույնից, կրոնից, սեռից, հասակից, ֆիզիկական ունակություններից, ազգային պատկանելիությունից, սեռական կողմնորոշումից, քաղաքական հայացքներից, արհմիությունների անդամակցությունից, ախտորոշման թեսթեր կազմելուց կամ ընտանեկան կարգավիճակից։
- Անթույլատրելի է ցանկացած տեսակի հոգեբանական, ֆիզիկական, սեռական կամ բանավոր վիրավորանքի, սպառնալիքների, ահաբեկման կամ ոտնձգության դրսևորում։
- Մատակարարողը պարտավոր է հարգել իր աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելության պայմանագրային իրավունքները, ամեն անգամ, երբ հավաքում է անձնական տեղեկություններ կամ նրանց նկատմամբ կիրառում է վերահսկողության մեթոդներ։

- Երբ մատակարարողը հաստիք է մտցնում անվտանգության ծառայություն՝ իր աշխատակիցների և գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով, մատակարարողը պետք է ուշադրություն դարձնի, որ անվտանգության ծառայություն էլ հաշվի առնի նույն՝ արդար և հավասար վերաբերմունքի մասին չափանիշները:

Աշխատանքային ժամանակը և հանգստյան օրերը Մատակարարողը պետք է հետևի, որ իր աշխատակիցները աշխատեն բոլոր գործող օրենսդրության և անհրաժեշտ արտադրական չափանիշների համապատասխան, որոնք վերաբերում են աշխատանքային ժամերին, արտաժամյա աշխատանքին, հանգստյան և հղիության, ծննդաբերության և հայրության արձակուրդների քանակին: Այսպիսի կանոնների բացակայության դեպքում Մատակարարողը չպետք է պահանջի աշխատանքային շաբաթվա ընթացքում աշխատել 60 ժամից ավելին, աշխատողները պետք է ունենան առնվազն մեկ հանգստյան օր՝ անընդմեջ վեց օր աշխատելուց հետո, իսկ արտաժամյա աշխատանքը պետք է լինի կամավոր և փոխհատուցվի աճող սակագնով:

Աշխատավարձերը և հավելավճարներ

Մատակարարողի աշխատակիցներին պետք է տրվի աշխատավարձ և հավելավճարներ ոչ պակաս այն քանակի, ինչը սահմանված է ազգային օրենսդրության պահանջի համապատասխան կամ արտադրական չափանիշներով՝ ըստ նրա, թե որ գումարն է ավելի բարձր, ինչպես նաև պարտադիր է կոլեկտիվ բանակցությունները, այդ թվում՝ նրանք, որոնք վերաբերում են արտաժամյա աշխատանքին և լրացուցիչ փոխհատուցման այլ տեսակներին: Ցանկացած դեպքում աշխատավարձը պետք է լինի բավարար աշխատողների և պաշտոնագետ նրանց խնամքի տակ գտնվողների հիմնական պահանջները բավարարելու համար և ապահովի որոշակի հայեցողական (դիսկրեցիկ) եկամուտի գոյություն: Մատակարարողը չպետք է կատարի կարգապահական կամ որևէ այլ ձևի պահումներ աշխատավարձից, ինչպես նաև չպետք է կիրառի խտրականության ոչ մի ձև՝ աշխատանքի ընդունելիս և փոխհատուցման չափը սահմանելիս:

## 2 Անվտանգություն և առողջություն

Կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ն հավաստիացնում է, որ մատակարարողի, ինչպես նաև աշխատակիցների գործունեության և կառավարման համակարգերն ուղղված կլինեն դեպի մասնագիտական վնասվածքների ու հիվանդությունների առաջացումից խուսափումը:

Աշխատանքային միջավայր

Մատակարարողը պետք է իր աշխատակիցների համար ստեղծի աշխատանքի համար անվտանգ և աջակցող աշխատանքային միջավայր: Բացի պատշաճ կահավորված աշխատատեղերի, որպես նվազագույնը, պետք է ապահովված լինի խմելու ջուրը, պատշաճ լուսավորումը, ջերմաստիճանային ռեժիմը, օդափոխությունը, ընդունելի սանիտարական պայմանները և անհրաժեշտ պաշտպանական միջոցները: Բացի այդ, արդյունաբերական տարածքները պետք է նախագծված և օգտագործված լինեն չափանիշներին, օրենքներին և գործող օրենսդրությանը համապատասխան:

Կենսապայմանները և հարգանք՝ անձնական կյանքի նկատմամբ

Մատակարարողի կողմից հանրակացարանով ապահովելու դեպքում դա պետք է լինի նախագծված և կիրառված գործող օրենսդրության

և կանոնակարգերին համապատասխան, այդպես պետք է լինեն տարանջատված գործարանի և արտադրության վայրից: Հանրակացարանի բոլոր շենքերը ապահովված պետք է լինեն մաքրությամբ և անվտանգությամբ, իսկ աշխատակիցները պետք է հնարավորություն ունենան օր ու գիշերի ցանկացած ժամանակ հանրակացարանի տարածք ազատ մտնելու և հեռանալու հնարավորություն: Շենքերը պետք է ապահովված լինեն մաքուր գուգարաններ, խմելու ջուրը, սննդի պատրաստման և պահելու միջոցների հասանելիությամբ: Այդպես հանրակացարանի բոլոր աշխատակիցների համար պետք է նախատեսված լինի անհրաժեշտ անձնական տարածք, ջեռուցում և օդափոխություն, ցնցուղի և լողանքի մաքուր սենյակներ:

Արտակարգ իրավիճակների համար նախապատրաստվածություն

Մատակարարողը պետք է պատրաստ լինի արտակարգ իրավիճակների համար, ինչը ներառում է աշխատողների իրազեկվածությունը և տարիանման ընթացակարգի առկայությունը, վթարային իրավիճակների ժամանակ գործողությունների ուսուցումը և հրահանգների անցկացումը, առաջին բուժօգնության հատկացման համապատասխան հավաքածուները հրդեհի հայտնաբերման և կանխարգելման համապատասխան սարքավորումները և հավուր պատշաճի կահավորված ելքերի առկայությունը: Մատակարարողը իր աշխատակիցների համար կանոնավոր կերպով պետք է անցկացնի արտակարգ իրավիճակում գործելու ծրագրավորման, արձագանքման, այդպես բժշկական ծառայություն մատուցելու վարժանքներ:

Արտադրանքի որակը և անվտանգությունը

Բոլոր ապրանքները և ծառայությունները, որոնք մատուցված են մատակարարողի կողմից պետք է համապատասխանեն որակին և անվտանգության անհրաժեշտ չափանիշներին, որոնք սահմանված են գործող օրենսդրությամբ: Կոմպանիան գործունեություն ծավալելիս կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ի հետ միասին կամ նրա անունից, մատակարարողը պարտավոր է պահպանել «ՆԵՄՍԼԵ»-ի որակի պահանջները:

## 3. Էկոլոգիական (բնապահպանական) կայունությունը

Կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ն պահանջում իր մատակարարողից՝ պահպանել բոլոր գործող շրջակա միջավայրի իրավական էկոլոգիական պահանջները և գործունեության բնապահպանական ցուցանիշների մշտական բարելավման ապացույցներ:

Էկոլոգիական թույլտվություն և հաշվետվություն

Հաշվետվություն կազմելիս մատակարարողը պետք է ապահովի բոլոր այն խորհուրդների ընդունումը, նորացումը և պաշտպանությունը, որոնք սահմանված են էկոլոգիական թույլտվություն ստանալու համար և ցանկացած ժամանակ գրանցման ուժի մեջ թողնելու համար:

Շրջակա միջավայրի կառավարման համակարգ

Մատակարարողը պետք է փաստաթղթերով ցույց տա և մտցնի շրջակա միջավայրի կառավարման համապատասխան համակարգ (որը հիմնված է միջազգային չափանիշների վրա, ինչպիսիք են ISO 14001:2004) հատկացված վերահսկման, ազդեցություն գործելու և շրջակա միջավայրի վրա նշանակալից ազդեցության նվազեցման համար:

Վտանգավոր նյութեր և արտադրանքի անվտանգություն

Մատակարարողը պետք է վեր հանի, պարզի բոլոր վտանգավոր նյութերը, քիմիկատները և նյութերը և ապահովի դրանց անվտանգ գործածումը, մշակումը

փոխադրումը, պահպանումը, վերամշակումը, կրկնակի օգտագործումը և հեռացումը: Անպայման անհրաժեշտ է խստորեն հետևել բոլոր գործող կանոնների և կարգերի կատարմանը- որոնք կապված են վտանգավոր նյութերի, քիմիկատների հետ:

Մատակարարողը պարտավոր է պահպանել նյութական սահմանափակումները և արտադրանքի անվտանգության պահանջները, որոնք սահմանված են գործող կանոններով և կարգերով: Մատակարարողները պետք է ապահովեն հանգուցային աշխատակիցներին արտադրանքի անվտանգության ապահովման մեթոդների ուսուցումը և նրանց կողմից գործնական մեթոդների ուսումնասիրումը:

Ռեսուրսների օգտագործման, շրջակա միջավայրի աղտոտման և թափոնների նվազեցման հիմնախնդիրը

Մատակարարողը օպտիմալ կերպով պետք է օգտագործի բնական ռեսուրսները, այդ թվում՝ էներգիան և ջուրը: Մատակարարողը պետք է իրականացնի և փաստարկված ցույց տա աղտոտումից խուսափելու և կոշտ թափոնները, հոսող ջրերը և օդային արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով ձեռնարկված միջոցները: Արտազատումից կամ թափել- հեռացնելուց առաջ մատակարարողը հավուր պատշաճի պետք է և տեսակավորի և վերամշակի կոյուղիների հոսող կեղտաջրերը և կոշտ թափոնները՝ համաձայն գործող օրենքների և կանոնակարգերի:

#### 4. Ազնվությունը գործնական հարաբերություններում

Կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ն պահանջում է բոլոր այն երկրների գործող ազգային կանոնների ու առևտրի կանոնների պահպանում, որտեղ էլ կատարում են մատակարարումը, արտադրությունը կամ մտցումը «ՆԵՄՍԼԵ»-ի արտադրանքների բաղադրության մեջ համապատասխան նյութեր («օգտագործման երկիր»): Ծառայություն մատուցելու դեպքում պետք է կիրառվեն այն պահանջները, որոնք գործում են ծառայություն մատուցվող երկրի տարածքում:

Պայքար ընդդեմ կաշառակերության

Մատակարարողը երբեք, ոչ ուղղակիորեն, ոչ էլ միջնորդների միջոցով չպետք է առաջարկի կամ խոստանա որևէ անձնական շահույթ կամ ոչ պատշաճ առավելություն՝ բիզնես ընդունելու կամ պահպանելու նպատակով, կամ որևէ այլ շահույթ ստանալու համար օտար կազմակերպություններից՝ լինի դա պետական, թե մասնավոր: Մատակարարողը չպետք է տա կամ վերցնի կաշառք, կազմակերպի կաշառքի ընդունումը կամ ստանա այդ, չպետք է իրականացնի այնպիսի գործունեություն, որը խախտում է կամ առաջացնում է նրա գործնական պարտնյորների կողմից գործող կանոնների և կարգերի խախտում, այդ թվում՝ ԱՄՆ-ի արտասահմանայա կոռուպցիայի մասին և Միացյալ թագավորության կաշառակերության դեմ պայքարի մասին կանոններին:

Բողոքարկման մեխանիզմը

Մատակարարողը աշխատանքի ժամանակ պետք է իրականացնի այնպիսի համակարգեր, որոնք թույլ են տալիս անանուն բողոք ներկայացնել, հաշվետվություններ կատարել և կառավարել: Հատուկ նշանակված աշխատակիցը մշտապես պետք է վերահսկի բողոքների քննման մեխանիզմը, արձանագրի բարձրացված հարցերը և ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ գաղտնիության հիման վրա:

Գործի վարույթը

Մատակարարողը պետք է ապահովի հաշվետվության և փաստաթղթերի թափանցիկությունը և արդիականությունը, ինչն

էլ ցույց է տալիս նյութերի, ծառայությունների նկատմամբ կիրառված պահանջների, կառավարական որոշումների և արդյունաբերական կանոնների պահպանումը:

Ծագումը

Մատակարարողը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու տեղեկատվություն իրականացված մատակարարման, բոլոր պոտենցյալ աղբյուրների առաջնային ծագման մասին (ծագման երկրի մասին): Կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ մատակարարողից պահանջել ներկայացնել մատակարարման ամբողջական շղթան՝ անգամ մինչև ծագման աղբյուրը՝ մատակարարման շղթայի պահանջների գնահատման համար:

Մտավոր սեփականություն

Մատակարարողը պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները՝ սեփական գործնական գործընկերների մասին գաղտնի և մասնավոր տեղեկատվության պաշտպանության և գաղտնիության պահպանման համար և օգտագործի նման տեղեկատվությունները այն նպատակներով, որոնք սահմանված են պայմանագրով: Ենթագրավադրային հարաբերությունների դեպքերում, գաղտնի տեղեկատվության փոխանակումը պետք է կատարվի կոմպանիա «ՆԵՄՍԼԵ»-ի համաձայնությամբ:

Շահերի բախումը

Ակնկալվում է, որ մատակարարողը կտեղեկացնի «ՆԵՄՍԼԵ»-ին ցանկացած իրավիճակի մասին, որոնք կարող են առաջանալ շահերի բախման ձևերով և տեղեկատվություն կտրամադրի «ՆԵՄՍԼԵ»-ին այն դեպքում, երբ «ՆԵՄՍԼԵ»-ի որևէ մի աշխատակից կամ մասնագետ, որը «ՆԵՄՍԼԵ»-ի հետ համագործակցում է պայմանագրով, ներկայացնում է շահագրգիռ կողմը մատակարարողի արտադրության հարաբերությամբ կամ ունի ինչ-որ տնտեսական կապեր մատակարարողի հետ:

Լրացուցիչ ստանդարտներ

- Բացի «ՆԵՄՍԼԵ»-ի մատակարարողի օրենսգրքի, մատակարարողը պարտավոր է պահպանել բոլոր լրացուցիչ պահանջները, որոնք գործում են նյութերի և ծառայությունների վերաբերյալ, որոնք պետք է առաքվեն կամ տրամադրվեն, մասնավորապես՝ ղեկավարության պահանջները մատակարարողներին պատասխանատվությամբ ընտրելու և գնահատելու համար, օրինակ՝ պահանջները կենդանիների և հողի իրավունքների պաշտպանության մասին:
- Ֆերմերներից ուղիղ, անմիջական մատակարարման դեպքում, Օրենսգրքի պահանջման ապահովման համար ֆերմերը պետք է հետևի գործող գյուղատնտեսական պրակտիկայի պահանջներին: «ՆԵՄՍԼԵ»-ի ծրագիրը գյուղատնտեսության, անտառային և ձկնորսական ապրանքի մատակարարողների պատասխանատվությամբ ընտրության և գնահատման մասին, պարունակում է լրացուցիչ խորհուրդներ աշխատանքի լավագույն մեթոդների մասին, որոնք անհրաժեշտության դեպքում, պետք է ներդրվի «ՆԵՄՍԼԵ»-ի գյուղատնտեսական ծառայության աշխատանքային խմբերի օգնությամբ:

# Հաջորդ քայլերը

## I. Խախտումների մասին տեղեկատվություն տրամադրում

Մատակարարողը պետք է մատակարարի տեղեկատվություն կանոնակարգերի, օրենքների և օրենսգրքի ցանկացած տեսակի ենթադրյալ խախտումների մասին: Խախտումների մասին հաշվետվությունը «ՆԵՍՏԼԵ»-ի կոնտակտային անձին պետք է տեղեկացվի զաղտնի՝ ստորև տրված որևէ ալիքի կիրառմամբ:

|                                         |                                                                                                            |
|-----------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|
| Կայք էջ՝                                | <a href="http://www.nestle.com/tell-us">www.nestle.com/tell-us</a>                                         |
| Թեժ գիծ՝                                | Տեղական հեռախոսահամարները մատչելի են<br><a href="http://www.nestle.com/tell-us">www.nestle.com/tell-us</a> |
| Շվեյցարիա՝<br>Հասանելիության ծածկագիրը՝ | +41 800 56 14 22<br>11021                                                                                  |

## II. Մատակարարողի հաստատումը ( եթե պահանջված է «ՆԵՍՏԼԵ»-ի գնումների կազմակերպության կողմից )

Մենք՝ ստորև ստորագրողներս հաստատում ենք, որ

- Մենք ստացել ենք և ծանոթացել սույն 2013 թվականի «ՆԵՍՏԼԵ»-ի մատակարարողի ծածկագրի բովանդակությանը՝ հրապարակած «ՆԵՍՏԼԵ»-ի կողմից:
- Մենք տեղեկացված ենք երկրում գործող համապատասխան օրենսդրության և կանոնակարգերի մասին:
- Մենք կտրամադրենք տեղեկատվություն՝ «ՆԵՍՏԼԵ»-ի օրենսգրքի ցանկացած տեսակի խախտման դեպքերի մասին:
- Մենք կգործենք «ՆԵՍՏԼԵ»-ի մատակարարողի օրենսգրքի պահանջների համապատասխան, ինչը ուղղված է դեպի զարգացումը՝ առանց ուղղումների և լուծարման:
- Մենք կտրամադրենք տեղեկատվություն մեր կողմից աշխատանքի նշանակվածներին, ենթապայմանագրայիններին, «ՆԵՍՏԼԵ»-ի մատակարարման օրենսգրքի մասին, որպեսզի նրանք ևս պահպանեն դրա մեջ ներառվող դրույթները:

Մենք իրավունք ենք տալիս «ՆԵՍՏԼԵ»-ին կամ ցանկացած կազմակերպությանը, որը գործում է «ՆԵՍՏԼԵ»-ի անունից, անցկացնել աուդիտ նախապես զգուշացնելուց հետո կամ առանց զգուշացման, մեր տարածքում և մեր ենթապայմանագրայինների արտադրական շենքում ցանկացած ժամանակ, այն նպատակով, որ պարզվի համապատասխանությունը «ՆԵՍՏԼԵ»-ի մատակարարման օրենսգրքի բովանդակության հետ:

Կազմակերպության անվանումը:

Անունը և պաշտոնը

ստորագրություն

Ընկերությունը դրոշմակնիքը / կնիքը

Ընկերության բիզնես գրանցման / նոտարական նույնականացման համարը /  
ծածկագիրը / համարը

Տարեթիվ, ամսաթիվ և տեղ

Փաստաթղթի ստորագրումը պետք է կատարվի մատակարարողի լիազորված ներկայացուցչի կողմից, և պետք է իրականանա նրա վերադարձը «ՆԵՍՏԼԵ»-ի գնումների կազմակերպություն:



